ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի մայիսի 10-ի թիվ 2/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 20-րդ հոդվածով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Հաշվեքննիչ պալատի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2009թ. փետրվարի 2-ի թիվ 4/10 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ

ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2018 թվականի մայիսի 10-ի թիվ 2/1 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
(Հավելվածը խմբ. 09.09.2024 94-Լ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հաշվեքննիչ պալատն արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող անկախ պետական մարմին է:

2. Հաշվեքննիչ պալատը կազմավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված կարգով:

3. Հաշվեքննիչ պալատը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

4. Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելու նպատակով՝ ընդունում է անհատական և ներքին իրավական ակտեր:

5. Հաշվեքննիչ պալատն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ: Հաշվեքննիչ պալատն ունի իր կողմից սահմանված ձևի խորհրդանիշ (Ձև 1): Հաշվեքննիչ պալատի խորհրդանշի տարրերն են՝ խոշորացույցը, որն իրենից ներկայացնում է երկնագույն շրջան, և հանրային սեփականության կառավարման շրջանակը, որն իրենից ներկայացնում է քառակուսի հիմքի մեջ մուգ և բաց կապտագույն փոքր շրջաններ: Խոշորացույցը խորհրդանշում է մանրազնին գնահատման միջոցով հանրային սեփականության կառավարման օրինականության և արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը և այն հանրության համար թափանցիկ դարձնելը: Մուգ կապտագույն շրջանները խորհրդանշում են հանրային

սեփականության կառավարման էական մասը, որը դիտարկվում է որպես հաշվեքննության առարկա:

6. Հաշվեքննիչ պալատի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Հաշվեքննիչ պալատ (կրճատ՝ Հաշվեքննիչ պալատ).

2) ռուսերեն լրիվ՝ Аудиторская палата Республики Армения (կրճատ՝ Аудиторская палата).

3) անգլերեն լրիվ՝ Audit Chamber of The Republic of Armenia (կրճատ՝ Audit Chamber)

7. Հաշվեքննիչ պալատի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան 19:

8. Հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքէջն է՝ www.armsai.am:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Հաշվեքննիչ պալատի գործունեության նպատակը հաշվեքննությունների իրականացմամբ հանրային ֆինանսների ու սեփականության ոլորտում օրինականության և արդյունավետության պահպանման վերաբերյալ հանրությանն ու Ազգային ժողով ժամանակին մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է:

10. Հաշվեքննիչ պալատը մշակում, հաստատում և իրականացնում է արտաքին պետական հաշվեքննության ոլորտում քաղաքականությունը:

11. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հիմնարկների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ պետական գործառույթներով օժտված այլ իրավաբանական անձանց նկատմամբ՝ անկախ դրանց գործունեությունն արտահայտող ֆինանսական գործառնությունների՝ պետական և համայնքային բյուջեներում արտացոլված լինելու հանգամանքից կամ եղանակից:

12.Հաշվեքննիչ պալատը՝

1) կազմակերպում և իրականացնում է պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման ֆինանսական հաշվեքննություններ, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով նախատեսված թեմատիկ հաշվեքննություններ,

2) «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավաբանական անձանց մոտ կազմակերպում և իրականացնում է ստուգումներ,

3) իրականացնում է օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Հաշվեքննիչ պալատը՝

1) հաստատում է Հաշվեքննիչ պալատի կանոնադրությունը և կատարում կանոնադրության փոփոխություններ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված՝ իր գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Հաշվեքննիչ պալատի գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է Հաշվեքննիչ պալատի գործունեության վերահսկողությունը.

4) լսում է ներքին աուդիտի, էթիկայի և որակի հսկողության կոմիտեների գործունեության մասին հաշվետվությունները.

5) վերահսկողություն է իրականացնում Հաշվեքննիչ պալատին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) իրականացնում է օրենքով սահմանված կառավարման այլ լիազորություններ:

14. Հաշվեքննիչ պալատի նախագահը՝

1) ապահովում է Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությունը.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև Հաշվեքննիչ պալատի գործունեության շրջանակում, տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները և հանձնարարականները.

4) իր իրավասության սահմաններում նշանակում է ծառայողական քննություն և դրա արդյունքներով ընդունում որոշում.

5) իրականացնում է Հաշվեքննիչ պալատի բնականոն գործունեությանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

15. Հաշվեքննիչ պալատի նախագահին անմիջական հաշվետու են Հաշվեքննիչ պալատի նախագահի խորհրդականը և օգնականը, գլխավոր քարտուղարը, Հաշվեքննիչ պալատի հիմնական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը: Հաշվեքննիչ պալատի նախագահը սույն կետով նախատեսված անձանց անմիջական ղեկավարն է:

(15-րդ կետը խմբ., լրաց. 04.09.2025 60-Լ)

15.1. Հաշվեքննիչ պալատի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալը:

(15.1-ին կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

16. Հաշվեքննիչ պալատում ձևավորվում են Հաշվեքննիչ պալատի գործադիր, աուդիտի, էթիկայի և որակի հսկողության կոմիտեներ, որոնք կարծիք են ներկայացնում Հաշվեքննիչ պալատի նիստում քննարկման ներկայացվող իրենց ոլորտներին վերաբերող և Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից կոմիտեներին կարծիքի ներկայացված որոշումների նախագծերի վերաբերյալ, բացառությամբ այն նախագծերի, որոնց վերաբերյալ պետք է ներկայացնեն օրենքով սահմանված մասնագիտական եզրակացություն: Ընդ որում, կածիքը պետք է պարունակի տեղեկատվություն այն մասին, թե ինչ ստանդարտներ, մեթոդաբանություններ և ուղեցույցներ են կիրառվել տվյալ կարծիքի ձևավորման գործընթացում: Աուդիտի, էթիկայի և որակի հսկողության կոմիտեների ղեկավարումն իրականացվում է տարեկան ռոտացիոն կարգով՝ ըստ Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում ավելի երկար ստաժի, հետևյալ հերթականությամբ՝ աուդիտի կոմիտեն առաջինը նախագահում է Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում ամենաերկար ստաժ ունեցող կոմիտեի անդամը, էթիկայի կոմիտեն՝ երկրորդ ամենաերկար ստաժ ունեցողը, իսկ որակի հսկողության կոմիտեն՝ երրորդ ամենաերկար ստաժ ունեցողը: Ռոտացիան կատարվում է ըստ հաջորդող ստաժի հերթականության:

(16-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

17. Հաշվեքննիչ պալատն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում գլխավոր քարտուղարի միջոցով:

18. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է, որին պաշտոնի նշանակում և ազատում է, ինչպես նաև նրա նկատմամբ խրախուսման միջոցներ է կիրառում կամ կարգապահական տույժ է նշանակում Հաշվեքննիչ պալատի նախագահը:

19. Գլխավոր քարտուղարն օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է Հաշվեքննիչ պալատի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության կազմակերպման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար:

20. Հաշվեքննիչ պալատի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարին:

21. Գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Հաշվեքննիչ պալատին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Հաշվեքննիչ պալատի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս հանձնարարականներ.

5) Հաշվեքննիչ պալատին է ներկայացնում առաջարկություններ Հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

6) Հաշվեքննիչ պալատին ներկայացնում է աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն և հաշվետվություն.

7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ.

8) Հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներին փոխանցում է Հաշվեքննիչ պալատի կամ Հաշվեքննիչ պալատի նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն.

9) համակարգում է Հաշվեքննիչ պալատի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող հարցերը.

10) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

22. Գլխավոր քարտուղարը կարող է ունենալ մեկ տեղակալ, որը փոխարինում է նրան բացակայության ժամանակ: Գլխավոր քարտուղարն իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Գլխավոր քարտուղարի տեղակալն անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին:

23. Հաշվեքննիչ պալատի նախագահը կատարում է պարտականությունների բաշխում իր խորհրդականի և օգնականի միջև: Պարտականությունների բաշխումն իրականացվում է՝ բացառելով կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների իրականացման կրկնությունը և (կամ) զուգորդումը:

24. Հաշվեքննիչ պալատի նախագահի հրամանով առանձին դեպքերում խորհրդականին կարող է վերապահվել Հաշվեքննիչ պալատի նախագահի լիազորությունների իրականացմանն աջակցելու նպատակով որոշակի աշխատանքների համակարգման լիազորություն, որի շրջանակում խորհրդականն իրավունք ունի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն:

25. Հաշվեքննիչ պալատի նախագահի հրամանով առանձին դեպքերում Հաշվեքննիչ պալատի նախագահի օգնականին կարող է վերապահվել Հաշվեքննիչ պալատի նախագահի լիազորությունների իրականացմանն աջակցելու նպատակով որոշակի աշխատանքների կատարման լիազորություն, որի շրջանակում օգնականն իրավունք ունի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն:

26. Հաշվեքննիչ պալատի նախագահի հրամանով առանձին դեպքերում Հաշվեքննիչ պալատի մյուս անդամների օգնականներին կարող են վերապահվել Հաշվեքննիչ պալատի համապատասխան անդամի լիազորությունների իրականացմանն աջակցելու նպատակով որոշակի աշխատանքների կատարման լիազորություն, որի շրջանակում օգնականն իրավունք ունի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու անհրաժեշտ տեղեկատվություն:

4. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

27. Հաշվեքննիչ պալատի կազմում գործում են՝

1) հաշվեքննություն իրականացնող մասնագիտացված կառուցվածքային հետևյալ ստորաբաժանումները՝

ա. ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության վարչությունը,

բ. կատարողականի հաշվեքննության վարչությունը,

2) հաշվեքննությանն առնչվող մասնագիտական կառուցվածքային հետևյալ ստորաբաժանումները՝

ա. մեթոդաբանության և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչությունը,

բ. աուդիտի, էթիկայի և որակի հսկողության կոմիտեների գործունեության ապահովման բաժինը,

3) ներքին աուդիտի բաժինը,

4) աջակցող մասնագիտական կառուցվածքային հետևյալ ստորաբաժանումները՝

ա. ֆինանսատնտեսական բաժինը,

բ. հաղորդակցության և արարողակարգի բաժինը,

գ. անձնակազմի և կորպորատիվ մշակույթի բաժինը,

դ. իրավաբանական բաժինը:

28. Հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանման ներքին կառուցվածքը և գործառույթները սահմանվում են տվյալ կառուցվածքային ստորաբաժանման կանոնադրությամբ:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Հաշվեքննիչ պալատի գործադիր կոմիտեն կազմված է Հաշվեքննիչ պալատի նախագահից և հաշվեքննություններ համակարգող Հաշվեքննիչ պալատի երկու անդամներից:

30. Գործադիր կոմիտեն՝

1) քննարկում և Հաշվեքննիչ պալատ է ներկայացնում կարծիք Հաշվեքննիչ պալատի կողմից ընդունման ենթակա իրավական ակտերի վերաբերյալ.

2) Հաշվեքննիչ պալատի նախագահի դիմումի հիման վրա քննարկում և Հաշվեքննիչ պալատի նախագահին է ներկայացնում կարծիք Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից ընդունման ենթակա իրավական ակտերի վերաբերյալ.

3) քննարկումներ է կազմակերպում և կարծիք է ներկայացնում Հաշվեքննիչ պալատի իրավասությանը վերաբերող հարցերի մասին.

4) Կետն ուժը կորցրած է ճանաչվել 04.09.2025 60-Լ

31. Գործադիր կոմիտեն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք կազմակերպվում են Հաշվեքննիչ պալատի նախագահի հրավերով (այդ թվում՝ կոմիտեի անդամի առաջարկությամբ)՝ ըստ անհրաժեշտության կամ դիմումի հիման վրա: Նիստը, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացվել հեռավար (առցանց) կամ գրավոր ընթացակարգով:

(31-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

31.1. Դիմում կարող են ներկայացնել Հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ կոմիտեի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի քննարկման նպատակով:

(31.1-ին կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

32. Գործադիր կոմիտեի աշխատանքները ղեկավարում է Հաշվեքննիչ պալատի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում ավելի երկար ստաժ ունեցող կոմիտեի անդամը:

33. Գործադիր կոմիտեի նիստի նախապատրաստման, անցկացման (այդ թվում՝ արձանագրման) և փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքներն ապահովում է Հաշվեքննիչ պալատի փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու ստորաբաժանումը:

34. Գործադիր կոմիտեի նիստին մասնակցում են կոմիտեի անդամները, Հաշվեքննիչ պալատի փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը կամ այլ աշխատող, քննարկվող հարցի հեղինակը (կատարողը), ինչպես նաև

Հաշվեքննիչ պալատի նախագահի հրավերով (այդ թվում՝ գործադիր կոմիտեի մյուս անդամների առաջարկությամբ)՝ Հաշվեքննիչ պալատի այլ պաշտոնատար անձինք:

35. Հաշվեքննիչ պալատի իրավասությանը վերաբերող հարցերը (այդ թվում՝ Հաշվեքննիչ պալատի կողմից իրավական ակտերի ընդունման հարցերը) քննարկվում են ոչ ուշ, քան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստն սկսելուց երեք ժամ առաջ:

36. Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից ընդունման ենթակա իրավական ակտերը քննարկվում են Հաշվեքննիչ պալատի նախագահի դիմումը ներկայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

36.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ:

36.2.Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

36.3.Կոմիտեի կարծիքը համարվում է ընդունված կոմիտեի առնվազն 2 անդամի կողմ քվեարկելու դեպքում:

36.4. Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:

(36.1-36.4-րդ կետերը լրաց. 04.09.2025 60-Լ)

37. Գործադիր կոմիտեն հարցի քննարկման արդյունքներով տալիս է դրական կամ բացասական կարծիք, որը, ըստ անհրաժեշտության, կարող է ներառել նաև մեկնաբանություններ և առաջարկներ:

38. Գործադիր կոմիտեի նիստն արձանագրվում է:

(38-րդ կետը խմբ. 04.09.2025 60-Լ)

39. Արձանագրությունը ստորագրում է Հաշվեքննիչ պալատի նախագահը, որպես գործադիր կոմիտեի ղեկավար, և Հաշվեքննիչ պալատի փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինողը: Արձանագրությունն ուղարկվում է կոմիտեի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ պաշտոնատար անձանց՝ տեղեկացման միջոցով: Արձանագրությունը տեղադրվում է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի համապատասխան բաժնում, ինչպես նաև տղեկացվում է Հաշվեքննիչ պալատի անդամներին:

(39-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

6. ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Աուդիտի կոմիտեն գործադիր իրավասություններից անկախ խորհրդակցական մարմին է:

41. Աուդիտի կոմիտեն կազմված է Հաշվեքննիչ պալատի երեք անդամից: Կոմիտեի անդամ չեն կարող լինել Հաշվեքննիչ պալատի նախագահը և հաշվեքննություններ համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամները:

42. Աուդիտի կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է գործունեության տարեկան ծրագրի հիման վրա:

43. Աուդիտի կոմիտեն՝

1) ընթացիկ տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում (2025 թվականի չորրորդ եռամսյակի ծրագիրը սահմանվում է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 2-ը), հաստատում է հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը.

2) հսկողություն է իրականացնում ներքին աուդիտի գործառույթի և ներքին աուդիտի ստորաբաժանման նկատմամբ.

3) քննարկում է ներքին աուդիտի ստորաբաժանման կանոնադրության և գործունեության տարեկան ծրագրի նախագծերը.

4) քննարկում է ներքին աուդիտի հաշվետվությունը և Հաշվեքննիչ պալատին ներկայացնում է առաջարկություն՝ ներքին հսկողության և կառավարման արդյունավետության վերաբերյալ.

5) Հաշվեքննիչ պալատի արտաքին աուդիտի ընթացքում համագործակցում է արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության հետ, նպաստում է դրա և Հաշվեքննիչ պալատի միջև արդյունավետ փոխգործակցությանը.

6) դիտարկում է արտաքին աուդիտի աշխատանքի արդյունքները և դրանց հիման վրա Հաշվեքննիչ պալատին է ներկայացնում արձանագրված թերությունների վերացման գործողությունների ծրագիր .

7) առաջարկություն է ներկայացնում Հաշվեքննիչ պալատ՝ համապատասխան իրավական ակտի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ.

8) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում, Հաշվեքննիչ պալատին ներկայացնում է հաշվետու եռամսյակում, իր գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդում (բացառությամբ 2025

թվականի հաղորդումների, որոնք ներկայացվում են միայն չորրորդ եռամսյակի համար): Տարեկան հաղորդումը ներկայացվում է հաշվետու տարվան հաջորդող հունվարի երրորդ տասնօրյակում:

(43-րդ կետը խմբ., լրաց. 04.09.2025 60-Լ, խմբ. 07.10.2025 71-Լ)

44. Աուդիտի կոմիտեն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որի նախապատրաստման, անցկացման (այդ թվում՝ արձանագրման) և փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքներն ապահովում է աուդիտի, էթիկայի և որակի հսկողության կոմիտեների գործունեությունն ապահովող ստորաբաժանումը (այսուհետ՝ ապահովող ստորաբաժանում): Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Նիստը, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացվել հեռավար (առցանց) կամ գրավոր ընթացակարգով:

(44-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

44.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ:

44.2.Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

44.3.Կոմիտեի ծրագիրն, ինչպես նաև սույն կանոնադրության 16-րդ կետով նախատեսված կարծիքը հաստատվում են կոմիտեի առնվազն 2 անդամների կողմ քվեարկելու դեպքում:

(44.3-րդ կետը խմբ. 07.10.2025 71-Լ)

44.4. Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:

(44.1-44.4-րդ կետերը լրաց. 04.09.2025 60-Լ)

45. Աուդիտի կոմիտեի նիստին մասնակցում են կոմիտեի անդամները, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կամ այլ աշխատող, ապահովող ստորաբաժանման ղեկավարը կամ այլ աշխատող, կոմիտեի անդամների առաջարկությամբ (հրավերով)՝ Հաշվեքննիչ պալատի այլ պաշտոնատար անձինք: Կոմիտեի նիստին կոմիտեի անդամ չհանդիսացող Հաշվեքննիչ պալատի անդամները չեն մասնակցում:

46. Աուդիտի կոմիտեի նիստն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրում է կոմիտեի ղեկավարը և ապահովող ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինողը: Արձանագրությունն ուղարկվում է կոմիտեի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ պաշտոնատար անձանց՝ տեղեկացման միջոցով: Արձանագրությունը տեղադրվում է

«Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի համապատասխան բաժնում, ինչպես նաև տեղեկացվում է Հաշվեքննիչ պալատի անդամներին:

(46-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

7. ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

47. Էթիկայի կոմիտեն գործադիր իրավասություններից անկախ խորհրդակցական մարմին է:

48. Էթիկայի կոմիտեն կազմված է Հաշվեքննիչ պալատի երեք անդամից: Կոմիտեի անդամ չեն կարող լինել Հաշվեքննիչ պալատի նախագահը և հաշվեքննություններ համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամները:

49. Էթիկայի կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է գործունեության տարեկան ծրագրի հիման վրա:

50. Էթիկայի կոմիտեն՝

1) ընթացիկ տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում (2025 թվականի չորրորդ եռամսյակի ծրագիրը սահմանվում է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 2-ը), հաստատում է հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը.

2) մշտադիտարկում է էթիկային առնչվող քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացները և առաջարկություն է ներկայացնում դրանց բարելավման վերաբերյալ.

3) հսկողություն է իրականացնում Հաշվեքննիչ պալատի կողմից հաստատված՝ հաշվեքննության էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ.

4) վերլուծում է կարգապահական կանոնների պահպանման գործընթացը.

5) դիտարկում է հաշվեքննողների գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները.

6) ուսումնասիրում է հաշվեքննողների ու հաշվեքննության խմբի ղեկավարի կամ հաշվեքննության խմբի ղեկավարի ու հաշվեքննությունը համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամի միջև մասնագիտական դատողությունների էական տարբերության դեպքերը, դրանց հիման վրա Հաշվեքննիչ պալատ է ներկայացնում մասնագիտական եզրակացություն.

7) առաջարկություն է ներկայացնում Հաշվեքննիչ պալատ՝ համապատասխան իրավական ակտի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ.

8) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում, Հաշվեքննիչ պալատին ներկայացնում է հաշվետու եռամսյակում, իր գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդում (բացառությամբ 2025 թվականի հաղորդումների, որոնք ներկայացվում են միայն չորրորդ եռամսյակի համար) : Տարեկան հաղորդումը ներկայացվում է հաշվետու տարվան հաջորդող հունվարի երրորդ տասնօրյակում.

9) քննում և լուծում է Հաշվեքննիչ պալատի ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, կարգապահական և վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումները.

10) Հաշվեքննիչ պալատի ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, կարգապահական և վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում Հաշվեքննիչ պալատ.

11) Հաշվեքննիչ պալատի կողմից սահմանված կարգով, անց է կացնում ծառայողական քննություն.

12) վարում է Հաշվեքննիչ պալատի ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն:

(50-րդ կետը խմբ., լրաց. 27.02.2025 19-Լ, խմբ. 07.10.2025 71-Լ)

51. Էթիկայի կոմիտեն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որի նախապատրաստման, անցկացման (այդ թվում՝ արձանագրման) և փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքներն ապահովում է ապահովող ստորաբաժանումը: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Նիստը, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացվել հեռավար (առցանց) կամ գրավոր ընթացակարգով:

(51-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

51.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ:

51.2.Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

51.3.Կոմիտեի եզրակացությունը, ծրագիրը և սույն կանոնադրության 16-րդ կետով նախատեսված կարծիքը հաստատվում են կոմիտեի առնվազն 2 անդամների կողմ քվեարկելու դեպքում:

(51.3-րդ կետը խմբ. 07.10.2025 71-Լ)

51.4. Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:

(51.1-51.4-րդ կետերը լրաց. 04.09.2025 60-Լ)

52. Էթիկայի կոմիտեի նիստին մասնակցում են կոմիտեի անդամները, քննարկվող հարցին առնչվող պաշտոնատար անձինք, ապահովող ստորաբաժանման ղեկավարը կամ այլ աշխատող, կոմիտեի անդամների առաջարկությամբ (հրավերով)՝ Հաշվեքննիչ պալատի այլ պաշտոնատար անձինք: Կոմիտեի նիստին կոմիտեի անդամ չհանդիսացող Հաշվեքննիչ պալատի անդամները չեն մասնակցում:

53. Էթիկայի կոմիտեի նիստն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրում է կոմիտեի ղեկավարը և ապահովող ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինողը: Արձանագրությունն ուղարկվում է կոմիտեի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ պաշտոնատար անձանց՝ տեղեկացման միջոցով: Արձանագրությունը տեղադրվում է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի համապատասխան բաժնում, ինչպես նաև տղեկացվում է Հաշվեքննիչ պալատի անդամներին:

(53-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

8. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

54. Որակի հսկողության կոմիտեն գործադիր իրավասություններից անկախ խորհրդակցական մարմին է:

55. Որակի հսկողության կոմիտեն կազմված է Հաշվեքննիչ պալատի երեք անդամից: Կոմիտեի անդամ չեն կարող լինել Հաշվեքննիչ պալատի նախագահը և հաշվեքննություններ համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամները:

56. Որակի հսկողության կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է գործունեության տարեկան ծրագրի հիման վրա:

57. Որակի հսկողության կոմիտեն՝

1) ընթացիկ տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում (2025 թվականի չորրորդ եռամսյակի ծրագիրը սահմանվում է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 2-ը), հաստատում է հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը.

2) վերլուծում է որակի կառավարման համակարգի նպատակի իրագործումն ապահովող գործընթացները, բացահայտում դրանց հետ կապված ռիսկերը.

3) հաշվեքննության առանձին փուլերի արդյունքների նկատմամբ իրականացնում է որակի հսկողության անկախ վերանայում և դրա հիման վրա Հաշվեքննիչ պալատ է ներկայացնում մասնագիտական եզրակացություններ.

4) սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված վերանայման արդյունքներով հաշվեքննություն իրականացնող խմբին, համապատասխան ստորաբաժանման ղեկավարին և այդ ստորաբաժանման աշխատանքները համակարգող Հաշվեքննիչ պալատի անդամին ներկայացնում է առաջարկություններ և դիտողություններ.

5) բացահայտում և գնահատում է հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների ռիսկերը, առաջարկություն ներկայացնում բացահայտված ռիսկերը կառավարելու վերաբերյալ.

6) առաջարկություն է ներկայացնում Հաշվեքննիչ պալատ՝ համապատասխան իրավական ակտի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ.

7) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում, Հաշվեքննիչ պալատին ներկայացնում է հաշվետու եռամսյակում, իր գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդում (բացառությամբ 2025 թվականի հաղորդումների, որոնք ներկայացվում են միայն չորրորդ եռամսյակի համար): Տարեկան հաղորդումը ներկայացվում է հաշվետու տարվան հաջորդող հունվարի երրորդ տասնօրյակում:

(57-րդ կետը խմբ., լրաց. 04.09.2025 60-Լ, խմբ. 07.10.2025 71-Լ)

58. Որակի հսկողության կոմիտեն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որի նախապատրաստման, անցկացման (այդ թվում՝ արձանագրման) և փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքներն ապահովում է ապահովող

ստորաբաժանումը: Նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Նիստը, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացվել հեռավար (առցանց) կամ գրավոր ընթացակարգով:

(58-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

58.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ:

58.2.Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

58.3. Կոմիտեի եզրակացությունը, ծրագիրը և սույն կանոնադրության 16-րդ կետով նախատեսված կարծիքը հաստատվում են կոմիտեի առնվազն 2 անդամների կողմ քվեարկելու դեպքում:

(58.3-րդ կետը խմբ. 07.10.2025 71-Լ)

58.4. Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:

(58.1-58.4-րդ կետերը լրաց. 04.09.2025 60-Լ)

59. Որակի հսկողության կոմիտեի նիստին մասնակցում են կոմիտեի անդամները, քննարկվող հարցին առնչվող պաշտոնատար անձինք, ապահովող ստորաբաժանման ղեկավարը կամ այլ աշխատող, կոմիտեի անդամների առաջարկությամբ (հրավերով)՝ Հաշվեքննիչ պալատի այլ պաշտոնատար անձինք: Կոմիտեի նիստին կոմիտեի անդամ չհանդիսացող Հաշվեքննիչ պալատի անդամները չեն մասնակցում:

60. Որակի հսկողության կոմիտեի նիստն արձանագրվում է: Արձանագրությունը ստորագրում է կոմիտեի ղեկավարը և ապահովող ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինողը : Արձանագրությունն ուղարկվում է կոմիտեի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ պաշտոնատար անձանց՝ տեղեկացման միջոցով: Արձանագրությունը տեղադրվում է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի համապատասխան բաժնում, ինչպես նաև տղեկացվում է Հաշվեքննիչ պալատի անդամներին:

(60-րդ կետը լրաց. 04.09.2025 60-Լ)

9. ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՒՅՔԸ

61. Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից իր գործողություններով կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ:

62. Հաշվեքննիչ պալատը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:

63. Հաշվեքննիչ պալատն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

64. Հաշվեքննիչ պալատի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նրա տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

65. Հաշվեքննիչ պալատի պահպանման և լիազորությունների իրականացման հետ կապված ծախսերը ֆինանսավորվում են պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցներից:

66. Հաշվեքննիչ պալատն իր ֆինանսական գործառնություններն ու կարիքների համար գնումներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

67. Հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:



»: